# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Քաղաքացիական գործ թիվ **ԵԴ/33054/02/21**
**2025թ.**

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

## ԳՈՐԾԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«19» մարտի 2025թ. ք. Երևան

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

*նախագահող* Գ. ՀԱԿՈԲՅԱՆ
*զեկուցող* Ա. ՄԿՐՏՉՅԱՆ
Ն. ՀՈՎՍԵՓՅԱՆ
Ս. ՄԵՂՐՅԱՆ
Է. ՍԵԴՐԱԿՅԱՆ

քննարկելով ըստ «ՌՈԶԱ-ԱՆԻ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության սնանկության գործով կառավարիչ Վարազդատ Ասատրյանի հայցի ընդդեմ Ռոզա և Տարոն Թովմասյանների, երրորդ անձինք «ՌՈԶԱ-ԱՆԻ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն (այսուհետ՝ Ընկերություն), «ԱԳԲԱ Լիզինգ» վարկային կազմակերպություն փակ բաժնետիրական ընկերություն՝ գումար բռնագանձելու պահանջի մասին, թիվ ԵԴ/33054/02/21 քաղաքացիական գործի ենթակայության հարցը,

## Պ Ա Ր Զ Ե Ց

Դիմելով դատարան՝ Ընկերության սնանկության գործով կառավարիչ Վարազդատ Ասատրյանը պահանջել է Ռոզա և Տարոն Թովմասյաններից համապարտության կարգով բռնագանձել 47.884,95 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ և 719.976,80 ՀՀ դրամ՝ այն փոխանցելով Ընկերության սնանկության հատուկ հաշվին:

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր Դ. Հովհաննիսյան) 09.08.2021 թվականի որոշմամբ հայցադիմումն ընդունվել է վարույթ:

30.09.2022 թվականին քաղաքացիական գործը վերամակագրվել է, և Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր Զ. Նախշքարյան) 10.10.2022

թվականի որոշմամբ հայցադիմումն ընդունվել է վարույթ ու նշանակվել է նախնական դատական նիստ:

31.03.2023 թվականին քաղաքացիական գործը վերամակագրվել է, և Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի (դատավոր Էդ. Ամալյան) 10.04.2023 թվականի որոշմամբ հայցադիմումն ընդունվել է վարույթ ու նշանակվել է նախնական դատական նիստ:

18.02.2025 թվականին քաղաքացիական գործը վերամակագրվել է, և Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավոր Մ. Տաշչյանը 03.03.2025 թվականին որոշում է կայացրել սույն քաղաքացիական գործը Սնանկության դատարանի քննությանը հանձնելու մասին՝ պատճառաբանելով, որ.

«Նկատի ունենալով այն հանգամանքը, որ դատարանի վարույթում քննվող թիվ ԵԴ/3054/02/21 քաղաքացիական գործով ներկայացված պահանջը գույքային պահանջ է և այն, որ հիշյալ գործով հայցվորները հանդիսանում են սնանկ ճանաչված «ՌՈԶԱ-ԱՆԻ» ՍՊ ընկերության՝ «ԱԳԲԱ Լիզինգ» ՎԿ ՓԲ ընկերության հանդեպ ստանձնած վարկային պարտավորությունների կատարման երաշխավորներ, ուստի հիմք ընդունելով վերը հիշատակված իրավանորմերը, Դատարանը գտնում է, որ թիվ ԵԴ/33054/02/21 քաղաքացիական գործով պահանջը «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի հիմքով պետք է քննվի ՀՀ սնանկության դատարանի կողմից «ՌՈԶԱ-ԱՆԻ» ՍՊ ընկերության սնանկության գործի շրջանակներում»:

Գործն ստացվել է Սնանկության դատարանում և 07.03.2025 թվականին հանձնվել է նույն դատարանի դատավոր Բ. Մկրտչյանին:

Սնանկության դատարանի դատավոր Բ. Մկրտչյանը, համաձայն չլինելով գործի ենթակայությանը, 11.03.2025 թվականին որոշում է կայացրել գործի ենթակայությունը որոշելու համար թիվ ԵԴ/33054/02/21 քաղաքացիական գործը ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի նախագահին ուղարկելու մասին այն պատճառաբանությամբ, որ.

«Գործող խմբագրությամբ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մասի բովանդակության բացահայտման արդյունքում կարելի է արձանագրել, որ օրենսդրի սահմանած նոր իրավակարգավորումն ենթադրում է քաղաքացիական գործերի առավել լայն շրջանակի քննություն սնանկության վարույթի շրջանակում, մասնավորապես՝ այն քաղաքացիական գործերը, որոնք կապված են սնանկ ճանաչված պարտապանի գույքի կազմում ներառված գույքի և իրավունքների, երրորդ անձին պատկանող ապահովված իրավունքի առարկայի, պարտապանի և պարտատիրոջ մասնակցությամբ կնքված, ներառյալ՝ պարտավորությունների կատարման ապահովման միջոցների պայմանագրերի առնչությամբ ծագած և պարտատերերի պահանջների բավարարման հնարավորության վրա ազդող վեճերի հետ:

Նոր իրավակարգավորումը, սակայն, նախատեսում է բացառություն այն դեպքերի համար, երբ քաղաքացիական գործը հարուցվել է սնանկության գործով կառավարչի հայցի հիման վրա: Նման հայցով հարուցվող քաղաքացիական գործի պարագայում սնանկության գործը վարող դատավորի կողմից նույն սնանկության գործի շրջանակում տվյալ քաղաքացիական գործը քննելու ենթակայության պայմանը չի գործում և այդպիսի գործը կարող է հարուցվել ենթակայության ընդհանուր կանոններին համապատասխան: Այլ կերպ ասած՝ սնանկության գործով կառավարչի կողմից հայցերը պետք է ներկայացվեն և քննվեն սնանկության վարույթի շրջանակից դուրս:

Վերը նշվածի հաշվառմամբ նկատի ունենալով այն հանգամանքը, որ թիվ ԵԴ/33054/02/21 քաղաքացիական գործով հայցվոր է հանդիսանում սնանկության գործով կառավարիչը, այսինքն՝ քաղաքացիական գործը հարուցվել է սնանկության գործով կառավարչի հայցի հիման վրա, դատարանը գտնում է, որ բացակայում է թիվ ԵԴ/33054/02/21 քաղաքացիական գործը թիվ ՍնԴ/2770/04/20 սնանկության գործի շրջանակներում քննելու իրավական հնարավորությունը»:

Թիվ ԵԴ/33054/02/21 քաղաքացիական գործը Վճռաբեկ դատարանում ստացվել և դատական կազմին է հանձնվել 18.03.2025 թվականին:

Վճռաբեկ դատարանը, քննելով թիվ ԵԴ/33054/02/21 քաղաքացիական գործի ենթակայության հարցը, արձանագրում է հետևյալը.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քաղաքացիական գործերը ենթակա են քննության առաջին ատյանի դատարանում, բացառությամբ «Սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված դեպքերի և հակակոռուպցիոն դատարանին ենթակա գործերի:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 25-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ դատարանը գործը հանձնում է սնանկության դատարանի քննությանը, եթե գործը քննելիս պարզվել է, որ այն ենթակա է քննության սնանկության դատարանում:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործն ըստ տարածքային ընդդատության կամ սնանկության դատարանից ըստ ենթակայության ստացած դատարանը յոթնօրյա ժամկետում որոշում է կայացնում այն վարույթ ընդունելու կամ գործը Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատ ուղարկելու մասին, եթե համաձայն չէ գործի տարածքային ընդդատությանը կամ ենթակայությանը:

Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածի 1-3-րդ մասերով նախատեսված դեպքերում դատավորը ենթակայության հարցի որոշման համար գործը Վճռաբեկ դատարան ուղարկելու մասին կայացված որոշումը ուղարկում է գործին մասնակցող անձանց, որոնք այն ստանալու պահից եռօրյա ժամկետում կարող են գործի ենթակայության վերաբերյալ դիրքորոշում ներկայացնել Վճռաբեկ դատարան:

Նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածի 1-ին մասով նախատեսված դեպքում Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատը գործը Վճռաբեկ դատարանում ստանալու պահից հնգօրյա ժամկետում որոշում է գործի ընդդատությունը կամ ենթակայությունը:

Նույն հոդվածի 9-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածով սահմանված կարգով որոշված դատարանը համարվում է իրավասու դատարան:

Վկայակոչված նորմերից հետևում է, որ գործն ըստ տարածքային ընդդատության կամ ըստ ենթակայության ստացած դատարանը գործի տարածքային ընդդատությանը կամ ենթակայությանը համաձայն չլինելու դեպքում յոթնօրյա ժամկետում որոշում է կայացնում գործը Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատ ուղարկելու մասին՝ այդ որոշումն ուղարկելով գործին մասնակցող անձանց, որոնք այն ստանալու պահից՝ եռօրյա ժամկետում, կարող են գործի ենթակայության վերաբերյալ դիրքորոշում ներկայացնել Վճռաբեկ դատարան:

Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատը գործն ստանալու պահից՝ հնգօրյա ժամկետում, որոշում է գործի ընդդատությունը կամ ենթակայությունը: Ընդ որում, Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի որոշած դատարանը համարվում է իրավասու դատարան:

«Սնանկության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սնանկության գործերի վարումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության սնանկության դատարանում (...):

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ սնանկ ճանաչված պարտապանի գույքի կազմում ներառված գույքի և իրավունքների, երրորդ անձին պատկանող ապահովված իրավունքի առարկայի, պարտապանի և պարտատիրոջ մասնակցությամբ կնքված, ներառյալ՝ պարտավորությունների կատարման ապահովման միջոցների պայմանագրերի առնչությամբ ծագած և սնանկ ճանաչելու հարցի լուծման կամ պարտատերերի պահանջների բավարարման հնարավորության վրա ազդող վեճերով քաղաքացիական գործերը, **բացառությամբ կառավարչի կողմից ներկայացվող հայցերով** կամ «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման» մասին Հայաստանի Հանրապետության օրենքի հիման վրա ներկայացվող հայցերով հարուցվող քաղաքացիական գործերի, քննում է սնանկության գործը վարող դատավորը նույն սնանկության գործի շրջանակում՝ որպես առանձին քաղաքացիական գործեր (այսուհետ՝ առանձին քաղաքացիական գործեր): (...):

Նույն հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ ընդհանուր իրավասության դատարանից քաղաքացիական գործ ստանալու դեպքում դատարանը յոթնօրյա ժամկետում որոշում է կայացնում այն վարույթ ընդունելու կամ գործը Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի նախագահին ուղարկելու մասին, եթե համաձայն չէ գործի ենթակայությանը: Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի նախագահը գործը Վճռաբեկ դատարանում ստանալու պահից հնգօրյա ժամկետում որոշում է գործի ենթակայությունը: Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի նախագահի որոշած դատարանը համարվում է իրավասու դատարան:

Վերոգրյալ իրավական նորմերի վերլուծությունից հետևում է, որ քաղաքացիաիրավական վեճը սնանկության գործը վարող դատավորի կողմից նույն սնանկության գործի շրջանակում՝ որպես առանձին քաղաքացիական գործ ենթակա է քննության միայն հետևյալ երկու պայմանների միաժամանակյա առկայության դեպքում՝

1. քաղաքացիական գործով վեճը պետք է ծագած լինի՝

ա) կամ սնանկ ճանաչված պարտապանի գույքի կազմում ներառված գույքի և իրավունքների վերաբերյալ,

բ) կամ երրորդ անձին պատկանող ապահովված իրավունքի առարկայի վերաբերյալ,

գ) կամ պարտապանի և պարտատիրոջ մասնակցությամբ կնքված, ներառյալ՝ պարտավորությունների կատարման ապահովման միջոցների պայմանագրերի առնչությամբ, անկախ պարտապանի սնանկ ճանաչված լինելու հանգամանքից, բացառությամբ սնանկության գործով կառավարչի կողմից ներկայացվող հայցերից կամ «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» ՀՀ օրենքի հիման վրա ներկայացվող հայցերով հարուցվող քաղաքացիական գործերից:

2. նշված յուրաքանչյուր դեպքում քաղաքացիական գործով ծագած վեճը պետք է ազդեցություն ունենա սնանկ ճանաչելու հարցի լուծման կամ պարտատերերի պահանջների բավարարման հնարավորության վրա:

Այս կանոնից բացառություն են կազմում կառավարչի կողմից ներկայացվող հայցերով քաղաքացիական գործերը: Այսինքն՝ անկախ վերոնշյալ պայմանների առկայությունից, եթե հայց ներկայացնող սուբյեկտը սնանկության գործով կառավարիչն է, ապա այն ենթակա է քննության

սնանկության վարույթի շրջանակներից դուրս՝ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում:

Տվյալ դեպքում սույն գործով հայցը ներկայացվել է Ընկերության սնանկության գործով կառավարիչ Վարազդատ Ասատրյանի կողմից:

Շարադրված իրավական մեկնաբանությունների լույսի ներքո Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հայցը Ընկերության սնանկության գործով կառավարչի կողմից ներկայացված լինելու հանգամանքով պայմանավորված՝ առկա է «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված բացառությունը:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ թիվ ԵԴ/33054/02/21 քաղաքացիական գործն ըստ «ՌՈԶԱ-ԱՆԻ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության սնանկության գործով կառավարիչ Վարազդատ Ասատրյանի հայցի ընդդեմ Ռոզա և Տարոն Թովմասյանների, երրորդ անձինք «ՌՈԶԱ-ԱՆԻ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն, «ԱԳԲԱ Լիզինգ» վարկային կազմակերպություն փակ բաժնետիրական ընկերություն՝ գումար բռնագանձելու պահանջի մասին, ենթակա է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի քննությանը:

Վերոգրյալի հաշվառմամբ և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածով՝

## Ո Ր Ո Շ Ե Ց

1. Թիվ ԵԴ/33054/02/21 քաղաքացիական գործն ըստ «ՌՈԶԱ-ԱՆԻ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության սնանկության գործով կառավարիչ Վարազդատ Ասատրյանի հայցի ընդդեմ Ռոզա և Տարոն Թովմասյանների, երրորդ անձինք «ՌՈԶԱ-ԱՆԻ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն, «ԱԳԲԱ Լիզինգ» վարկային կազմակերպություն փակ բաժնետիրական ընկերություն՝ գումար բռնագանձելու պահանջի մասին, ենթակա է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի քննությանը:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*Նախագահող* _____ ***Գ. ՀԱԿՈԲՅԱՆ***

*Զեկուցող* _____ ***Ա. ՄԿՐՏՉՅԱՆ***

_____ ***Ն. ՀՈՎՍԵՓՅԱՆ***

_____ ***Ս. ՄԵՂՐՅԱՆ***

_____ ***Է. ՍԵԴՐԱԿՅԱՆ***